

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Աստղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9387

ՄԿՐՏԻՉ Յ. ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ

ՊՍԱԿՆ ԽՄՔԻՄԵԱՆԻ

Տոկա՛ ով մարդ, մի՛ յուսածատ իբ
կը լինի օր մը որ
ժպտայ բախտն երեսիդ
ես լինիս երջանիկ:

281.69
Tu-91L

ԱՀԲՐԵ - 1925

281.64
Խ - 912

NOV 2003

ՊՍԱԿՆ ԽՐԻՍՏԵԱՆԻ

Տոկա՛ ով մարդ . մի՛ յուսանատիք .
Կը լինի օր մը որ
Ժպտայ բախտն երեսիդ
Եւ լինիս երջանիկ :

ՄԿՐՏԻՉ

3.

ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ

ԳԱԶՄԻՔ — 1925

3 MAY 2013


9387



23636-59



Բ. Ա. Օ. Ը. Ը.



Խրիմեանի ըստ իր վարդույթուրեան
Վահանայի Վարագայ
Պապիկը ցաւպը ի ներկի որանեց ո՞ն Հարաւառ . . .



ՊՍԱԿՆ

Ի յիշատակութեան
Արձիւն Վասպուրականին
Հանգուցեալ
Տ. Տ. Մկրտիչ Ա. Վեհ. Կարողիկոսի
Հայրապեսն Ամենայն Հայոց
Խրիմեան ՀԱՅՐԻԿԻ
45-րդ դարու
Լուսաւորիչ ի տանէ Հայկազնեանց

«Ելի ի հօրէ եւ եկի յաշ-
խարի , բողոք զաշխարի եւ
երբամ դարձեալ առ Հայր» :
ԱԻՎԱՐՈՒՆ

Ծնած էր Արդմեան 1820 ին . Վասպու-
ռական աշխարհին և վանի ծոցին մէջ , ոս-
մանեան բարրարոս բռնութեան լուծին տակ :
Տեսնելով աշխարհի համայն պետութիւն-
ներ ազատ և անկախ իրաւունք կը վայելեն ,
երբ ազգասէր և անձնուէր պապիկներ են ուս-

նեցել, նրանց թոռնիկները ազատ և անկախ իրաւունք կը վայելին.

Մրիմեան մտաբերելով Հայկազեանց վեհապետներուն, երբ Հայաստանն ալ ազատ և անկախ իրաւունք կը վայելէր. յանձն Կ'առնէ բանտն. շղթայն, հալածանք. զի ապագայն հայ թոռնիկներ ազատ և անկախ նոյն իրաւունք վայելեն:

Պարկ ուսից կախած, ցուպ ձեռքին, առած Կ'որոնէ Հայկազեանց սերունդ.

1850-ին, Վասպուրական աշխարհէն, ի Պարսկաստան, Այրարատէն Բիւզանդէոն, Եղիպատուսէն Երուսաղէմ, մինչ Աւետեաց երկիր որոնել Հայկազեան սերունդ, երբ բարբարոս քռնութեան լուծէն, հալածուած օտարներ են դարձել, և օտար երկիրներուն մէջ, և օտարներին հետ ձուլուած, նրանց շահերին հաւապարմաբար կը ծառայեն.

Հրաւիրելով հայ սերունդի օտարացեալ միտքեր դէպի իրենց հայրենիք Հայաստան, երբ մոռացել են, իրենց սեփական ժառանգ և թողնելով օտարին, թշուառութեան մատնուած, բուերուն բոյն է դարձել.

1854-ին, դառնալով իր հայրենիք Վասպուրական աշխարհ, ըստ իր ուխտին նպատակ յառաջ տանել:

1855-ին կը ձեռնադրուի վարդապետ ի տանէ Ռշտունեաց, ի գահից Աղթամարայ

Յ. Տ. Պետրոս Վեհափառ Կաթողիկոսին (երբ ըստ իր պերճախօսութեան Պիւլապեւլ կաթողիկոս կը կոչուէր) և ինչպէս յայնկոյս Զորեկանքին իր անդրանիկ պատարագին յիշելով իր հոգեոր ծնողն ալեոր հայր.

Դողդոջ ի ծայր գաւազանին
Գերեզման ի գարշապար

Հայրապետն ի Տանէ Ռշտունեաց ի գահին
Աղթամարայ, Տ. Տ. Պետրոս Վեհափառ Կաթողիկոս...

Եւ իր անդրանիկ քարոզ իր սիրելի հօտին
Գիւղացիի մը ուխտ Աստուծոյ հետ.

Գիւղացի մը երբ իր արտը վարելու կը սկսի. Կ'ուխտէ Աստուծոյ ինչ որ ցորեն լինի հաւասար բաժնել.

Գիւղացին երբ արշալոյսին իր արօրը առանելով իր արտը վարելու կ'երթալ, երբ պիտի սկսի, կացինի պէտք կ'ունենայ, իր գործիքներ պնդացնելու, բայց գիւղացիին կինը ուժալմամբ կացինի փոխան թանի շերեփն է տուել. գիւղացին կարծելով որ շերեփ կացին է, գամին զարնելու պէս գլուխ կը թռչի, գիւղացին իր կացին փնտոելու տեղ շերեփի գըլուխ կը գտնէ.

Գիւղացին կը կարծէ որ, երբ Աստուծոյ հետ ուխտել էր ինչ որ ցորեն լինի հաւասար բաժնել, Աստուծած իրեն չափն է զրկեր.

Գիւղացին չուարած տրտունջ կը յայտնէ
առ Աստուած .

Ել Աստուած , մեռնիմ քեզ .

Դեռ ես իմ արտը չը վարած

Դուն շուտ ըմ քու ջափդ կը դրկես :

Հիմա մեր միաբաններուն է , գեռ մենք
ժողովրդին օգուտ մը չտուած ինձի նուիարակ
դրկած են որ պազի հաւաքեմ :

Ըստ սուրբ ուխտիս հյու ծառայ ,

Դեռ գաւազան իմ մեռք ջառած

Նոյն խորցի իր պանանշման ,

Զափը մեռքիս մուրալ հօտից :

Իսկ նորին Սրբութիւն չսպասելով խուցերու
փակւած անկիւն աղօթել մինակ ըստ իւրեանց ,
այլ աշխարհի համայն մարդկութեան շրջանին ,
ստրուկ և կեղեքուած ժողովուրդի իրաւունք
պաշտպանելու պէտքին ալ քարոզել , ինչպէս որ
իր պաշտելի վարդապետ պատախանեց ըստ
պէտքին , «Տուք զկալուերն ի կայսեր և զԱս-
տուծոյն՝ Խօստուծոյ» :

Առնելով Դրիգորեան գաւազան , և հագ-
նի ներսէսեան սրբաշնորհ վեղար և առնէ
Սահակ-Մեսրոբեան գրիչ , և ուխտէ պահել
իր պաշտելի վարդապետին այն պատուէր , երբ
պատուիրէր իր աշակերտներուն թէ «Դուք էք
աղն երկրին , եթէ աղն անհամ իցէ , իւ աղի-
ցէ զամենայն ինչս» :

Հետեւելով իր պաշտելի վարդապետին
հաւատարիմ աշակերտ , սկերուն փաթ-
թուած և աչքեր սրբաշնորհ վեղարին
տակ ծածկելով , և վեղարին տէր լինի ըստ իր
ուխտին , հեռանալով աշխարհի հաճոյքներէն և
անձնուէր հովիւ լինի հայ հօտին , թէ ազգին
գոյութիւն պահել չե թէ աղքատ ու ստրուկ
ժողովուրդի երաւունք պաշտպանել :

Տանելով իր պաշտելի վարդապետի այն
լուծք ըստ իր ուխտին զոր Պօղոսն ալ կը քա-
րոզէր . «Ուխտս դիք եւ կատարեցէք» :

1856-ին կ'ընտրուի Կարագայ վանքին
վանահայր և կը գրէ «Էստֆամանակին ի խոր-
հուրդն իւր» , օրինակ բերելով իր հայ հօտին
արտօւտիկի վիճակ :

Արտօւտիկ ուշ մեաց

իր ճագուկները բոցունենլ ,

Արտին տէրը կուզայ հնձել
երբ իր ցորեանը հասել է
Արտօւտիկը ճագուկներուն

Պատսպարան ալ չունի ,
բշուառուքեան կը մատնուին
արտօւտիկ իր ճագերը :

Եւ կը գրէ «Հայ Գոյժ» , «Վան Գոյժ» , եւ
«Մարգարիտարքայութեան երկնից» , «Հրաւի-
րակ Այրարատին» , «Հաւիրակ Աւետեաց երկրի»
«Արծիւ Վասպուրականին» արթն ցնելով իր հայ

հօտին, ըստ ժամանակին իրենց մոքեր, զի իրենց պապիկներէն ժառանգ հալրենիք Հայաստանին տէր լինել, զի ապագային իրենց ձագուկներ թշուառութեան չմատնուին։

1862-ին թողնելով իր հայրենիք Վասպուրական աշխարհը, Կ'ընտրուի հովիւ Տարօնոյ աշխարհին և առաջնորդ ի Մուշ քաղաքին, և Տարօնոյ անձնուէր ժողովուրդ մեծ խանդա վասութեամբ ընդունելով իր հոգեոր հովիւ և կ'երգէ։

Քու գալուստդ բարի արծիւ հայրենեաց,
Փուրայ կատարում տուր մեր բաղմանեաց,
Դիտենիր Հայաստան աշխարհից կուզաս,
Բայց մեզ երանից ի՞նչ խապրիկ մը տաս,
Վարագայ սուրբ վանքն է քու օրեւան.
Ինչպէս ամառուան նոյնակու նմեռուան,
Հայաստան աշխարհ բաց է քո առաջ,
Որով ամեն բան յայտնի է քեզ քաջ,
Ամպեր բարձրանան երկինքի վրայ,
Քու ազք հայրենեաց միշտ մտիկ կուտայ,
Վանայ գեղեցիկ ու վսեմ աշխարհ
Ինչպէս բողուցիր ու այստեղ եկար,
Արծիւի նըման սարից սար բռար
Ու ամբողջ աշխարհ ազքիդ տակ առար,
Փնտուել ճագերիդ բոյն մը օրեւան,
Դունել այն աշխարհ՝ Երկիրն Հայաստան։

Եւ կը զբէ «Արծուիկ Տարօնոյ, ի Սուրբ

Կարապետ վանքին և իր հովուական պարտականութիւն լիովին կը կատարէ մինչև 1868։

1868-ին Սուրբ Էջմիածին երթալով ձեռնազրուեցաւ արքեպիսկոպոս Տ. Տ. Գէորգ Պ. Կաթողիկոսէն և Կ'ընծայէ նուէր իր հեղինակած Խաչին ճառը իր հոգեոր ծնողաց, յիշելով իր վարդապետի այն պատուէր որ կը պատուիրէր. «Զրի առիք և ձրի տուք»։

1869-ին, կը հրաւիրուի ի Պոլսոյ գահին պատրիարքութեան ամենայն հայոց, իր սիրելի հօտ մեծ խանդավառութեամբ ընդունելով Վասպուրականի արծիւ իր Խրիմեան Հայրիկ, և քաջ յուսալով թէ հայի ապագայ յոյսեր թերի չի պիտի լինին, երբ այն սրբազան Գահին վրայ անձնուէր և ազգասէր հոգեոր հովիւ մը կը տեսնէ ինչպէս որ պաշտելի Պետրոս Դուրեան կը զրէ։

Այն սըգալի սեւ սեւ նոնեաց ետեւեն
Արշալոյսի շողք մեզի լոյս կ'աւետեն
Խուսեց խաւարն փողփողէ լոյս արեւուն
Հայոց կար միք մարզաց սառուտ սարերուն
Փլատակաց մրին խորքեն կուզայ ճայն
Հայե՛ր, հայե՛ր, դեռ Հայաստան չէ կորած։

Զայն տըսաղը չէ ստուեր,
Հուր ներշնչողը չեն աստղեր.
Նդրայրուեան է հուր ճայն,
Հայը սիրող հայն է այն։

Քիշերուան նետ նա ազգ խոկաց ու լացաւ ,
Արեւուն նետ կրակ ու բոց նա դարձաւ ,
Հողմաց թեւով միշտ սկացաւ հայկարան
Տիգրիսի հետ բըջեց աւերք տիգրական
Հայաստանի եղբայրութեան սիրանար
Հայ կոչելով շուրբերն եղան դալկահար .

Աւարայրի նա վարդին .
Սոխակն եղաւ տրտմազին .
Վարդան զոջեց նա անդէն .
Վասակն եղաւ դամբանէն .

Նա իրաւունք ազատութիւն գոչեց յար
Փողոտ ու խոնջ ոտքերն նետեց ուր հայ կար
Ուր որ հայ կար ջերմ համբուրեց նա այն հողն
Ուր որ հայը շնչեց առաջ եւ թէ նա հուր գրկեց
նոն ,

Թոցաշունջով հայէ առ հայ նա բռաւ
Հարուած , ցաւ , դաւ—սէրն խեղդէլու ջեղաւ
բաւ .

Այս հայկազն չունէր սուր
Այլ կաւրծն ունէր հայ խաչ հուր
Կը կանգնէր սեւ ու գրդեսկ ,
Նա գուր ունէր ոչ քառակ :

Ազատ սիրեց , ազատ զոջեց , զրովից ,
Հայ զայն ատեց հայ մը ձեռքը չըռըվեց ,
Բանտ , կախաղան , արսոր , Միպիր եւ սուսեր

Զկրցին ճայնն մարել խեղդել իր յոյսեր ,
Միշտ նալ կանչեց բարձն եր գլխուն Մասսեաց
սար

Նա սիրտն ըրաւ հայրենայուշ գուա քնար .

Արդ հայրենեաց մեր շնչիկ ,
Հով մը կուզայ անուշիկ ,
Վաս հակատնուդ այցելու ,
Հայուն աջերն սրբելու ,

Բաց են թեւեր . բաց են սիրտեր բաց ճակատ ,
Եկո՞ւր օգնե՞ւ տկար հայուն ապաբախտ
Հուր հայրենեաց եղբայրութեան դու հազագ
Քնարահաւար հայու մը իդը քեզ հրեշտակ
Վես Վոսփորի ալիքներ քեզ բարեւեն
Ցրւէ սեւ ձեռք սեւ ամպ հայոց արեւեն .

Արտօսը ու թիրտդ բոդ ֆալիկին
զերը աստղեր հայ Երկինքին
Սորվեցուր հայուն դու ,
սիրել . օգնել իրարու :

Արտասուարոր քեզ կը հային հայ աչեր
Սեւ շղրաներ քեզ ցոյց կուտան բու քաջեր
Մըշոյ կտրինք . աղջիկը ի քեզ ապաստան
Հայն ու դամբանն տանարն հիւղիկ Հայաստան
Թող վարտակաց մոխրեն յառնեն յիշատակը
Մուր մենաստանք վերափայլեն նախնի ֆառք

Լո՞յս , լոյս տեղան ամեն տեղ ,
գիտուրինն լո՞յս հայ ասաեղ :

Լոյս հիւղակին , լոյս վիկին ,
լոյս հայ փառաց շէջ ջանին ,

Ահա սրանայ մեզ ապագայ բոցադեզ
Մեր հայրենի աւերակաց տալ լոյս վես
Հարկ չեն մեզի նիզակ եւ սուր եւ փառօզ
իրաւունքի սիրոյ լուսոյ ենք կարօտ
Եզրայրութեան հայն կը յենու ոչ բագի
Բոնէ ձեռքին որ շունչ առնէ եւ նոգի

Եւ ալ մոռնայ հայկացն հիք
Հին հարուածներն ու խոր վերք
Եւ սիրոր ի տրոփ որստան ,
Կենաց միշտ հայրիկ Խրիմեան :

Իսկ Նորին սրբութիւն գոհ չմնալով օս-
տանեան շողոքորթ ու պարապ խոստումներին
1873. ին թողնելով իր պաշտօնը Ներսէս Վար-
ժապետեանին և կը հեռանայ յիշելով հովիւի
առակը .

Գառնուկներս մորքեցին
Ուկորներ մաքրեցին
Սիրտըս զրաւելու
Կուրծըս զարգարեցին .

(Ինչպէս որ 1881.-ին հայրենիք , յանկոյս
Զօրովանքի , ըստ իր քարոզին խօսեց նոյն
առակ , ասորոց Յակոր Մարշնմոնին ներկա-
յութեան և նրա առթիւ , երբ օսմանեան կա-
ռավարութիւն , ըստ իր շողոքորթութեամբ ,

Նրան սիրաշահելու համար , կուրծքը շքանը-
շանով զարդարած էր) .

1879.-ին Խորէն Նարպէյ , Մինսս Զերազ ,
Միքայէլ Նալբանդեան իո հետ առած Բերլին
կը դիմէ , բայց Նորին Սրբութեան փափաքը
թերի կը մնայ , երբ կը տեսնէ համայն աշ-
խարհի պետութիւնները իրենց զէնքերով են
իրաւունք ստացել :

Եւ կը բողոքէ Խրիմեանը , որ հայն ալ
իր անցեալի մէջ պետութիւն մը եղած էր եւ
այսօր բռնութեան լուծին տակ գերի կը մը-
նայ , և կը յաջողի 61.-րդ յօդուածին արձա-
նագրութիւնս իրենց շարքին :

1880.-ին մտաքերելով իր սիրելի Վարագն
և իր ճետեր (Գրիգորիս Աղուանեան , Դարեգին
Սրուանձեան , Արսէն Թոխմախեան , Գրիգո-
րիս Ալլէթձեան (Թոչնիկ) , Երեմիա Տէր Սար-
գիսեան և եղբայրք , Ղևոնդ Փիրխալամեան .

• • • • • • • • • • • • • • • • • • •)
Պատճառ հաւաքել նոյն ճետեր նոյն կտուրին
տակ , զի իր նպատակը կատարելագործել . և
ինչպէս որ կը դրէ Խորէն Խրիմեան .

Առ քեզ ով բոյն չքնաղդ Վարագ .

Սլանամ բոչիմ ըղձիս անհուն ,

Բաւ որ այսրան ընդ օտար աստղօր

Յիշատակաւադ մաշուիմ հոգով

Ոչ գեղն Վոսփոր , ոչ պերնն Եւրոպ ,

զօրեն հանել զքեզ սրտես

Թողեք գրկել զիմ բոյն Վարագ ,
զվայր յոր ես հանի նետեր ,
Միք սիրոյն կա՞լ մի կշխ .
Եւ կամ ունի՞ ջափ ովկեան ,
Անուն ե սէրն այնչափ իր տենչը .
Որ զիայրենոյն վառի անձրով ,
Միք քիչ է այս իմ կարօտ ,
իմ տասնամեայ պանդխտութեան .
Թողեք գրկեմ զիմ բոյն Վարագ .
զվայր յոր ես սնուցի նետեր .
Ազատ եմ ես այսունետեւ ,
ով իմ Վարագ իմ հայրենիք .
Ազատ ի քեզ ողբալ զրեզ ,
զրոյդ աւեր , ցաւերն ու վեր
Այլ թէ պարտիս կանգնիս ի վեր .
շուտով զիան վերքիդ տեղեր
Վազեմ գրկել զիմ բոյն Վարագ ,
զվայրն յոր ես բռուցի նետեր .

1881. ին դառնայ իր սիրելի Վասպուրա-
կան , և Վասպուրականի ժողովուրդ մեծ խան-
դավառութեամբ ընդունելով իր Հայրիկ . ինչ-
պէս որ կը գրէ Հայրապետ ձանիկեան .
Հայրիկ հայրիկ քու հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ
ցաւերդ դառան բիւր հազար .
Մայիս եկաւ սոխակներով .
վարդի մը քուփ որոնեց ,

Փախան քուփի մացաւ , գտաւ ,
լալահառաջ ճայն հանեց .
Հայրիկն ասաց իմ հայրենեաց .
փուշն անուշ է քան զվարդ .
Ես այդ փշոց մեջին զարձեալ ,
կ'որոնեմ իմ սիրուն վարդ .
Այն սայրասուր փշերն ամեն ,
փունջ կապեցէք շար ի շար ,
Թողեք զլիխս պասկ կապեմ ,
որուն նակատս է յօժար .
Հայրիկ , հայրիկ . քու սուրբ նակատ ,
արիւն արցունք են ոն միշտ .
Փքրեալ վարդից կարմիր թերթեր ,
կը պսակեն , փառօք զարդ .

Ըստ իր ագգասիրութեան , նորին սրբու .
թիւնը չի վարանիր քաղելու այն սայրասուր
փուշերէն վարդ , պսակ հիւսել հայկազեանց
ներկայ գիւցազներին , և քաջալերելով , մի
չի խնայել իրենց ջանքեր կոռւիլ արիաբար ,
կանգնել իրենց պապիկներու արձաններ եւ
թշուառ Հայաստան , որովհետեւ աշխարհի հա-
մայն պետութիւնները իրենց գոյութիւնը պա-
հելու համար «սահման քաջացն զէնք իւր-
եանցն է» :

25636-59



Միշտ յուսադրելով հայ հօտին, ինչպէս
որ 1882-ին հալրենիքի նորաշէն եկեղեցւոյ
հոգեհանգիստ կատարնց, Նիքոլա երկրորդ
ցարին, երբ իր պատարագին ներկալ է-
ին Խուսաց գեսպան Կամսարական պէյ Կամ-
սարականեան, և Բրիտանիսյ գեսպան, Մր.
Քլէթ գուշակելով, և կը մաղթէ թէ, պիտի
լինի օր մըն ալ, օր հաւ, ժաղովուրդը իր թա-
գաւորին հոգեհանդիստ կատարէ:

Մի վարանիր գռա նաւակար
Վարէ վարերդ յուսալով,
Կ'անհետանայ այդ փոքրիկ,
կը խաղաղի յուզեալ ծով,
Մօտ կ'երենի աջքիդ ցամաք
յուսադրել քեզ շուտով,
Նաւահանգիստ հանգիստ կ'ընե
բեկեալ նաւակդ շտապով:

Եւ ինչպէս 1881-ին սով կը տիրէր ամբողջ
վասպուրական, ժողովուրդ սովի մատնուած,
նորին որբութիւն ըստ իր ողորմածութեան,
մուրալով ըստ մուրացկաններուն, եւ ազտ-
աելով վասպուրականի երկցեղ ժաղովուրդ սո-
վի ճիրաններէն, և կրկնապատիկ բաժնելով
ըստ բաժանողներուն. նման Աշոտ աղորմա-
ծին, և ինչպէս ի հայրապետական գահին գը-

բած էր յօդուած մը «Մշտկ». ին մէջ.

«Երբ Անին և իր շրջակայք սով կը տիրէր
Աշոտ աղորմածին օրով և երբ Աշոտ ողորմած,
տանուտէրերուն նպաստ կը բաժնէր ըստ սով-
եալներուն, առաջին անգամ տալէն, կրկին
անգամ ևս կուտար երբ նախարարներ հարցու-
ցին թէ, ինչո՞ւ մէկ անգամ չես տար. Աշոտ
ողորմած պատասխանեց. Կրկին անգամ տա-
լուս պատճառը այն է որ, եթէ առաջին տը-
ւածս իրենց պահեն, գուցէ կրկին տուածս
տանեն սովեալներուն բաժնեն» :

Եւ նոյնպիս Խրիմեան իր առատաձեռ-
նութեամբ. բաժնելով ըստ բաժանողներուն,
և զգուշացնելով այն պաշտօնեաներուն, զի
չզրկել կարօտրալներու և հաւասար բաժնել,
և ինչպէս որ քարոզէր Քրիստոս «Դուք ամե-
նեքեան հաւասար եղբայր էք» :

Եւ բանալով շատ գպրոցներ և լուսաւո-
րելով հայ ժողովուրդի մտքեր և միջոցներ
հողագործներուն, ինչպէս որ իր սիրելի Վա-
րագայ վանքին կտուրին աակ գրէ իր Սիրաք
Սամուէլ և քաջալերելով չէնականի որդի
Սամուէլին.

Վարէ ու ցանէ որդեակս Սամուէլ,

Թող բռնանի, անի ցորեան ու գարին,

Հնձէ ու մաքրէ մեռնդ մարդկային .

Արօրդ և կեամբը ամբողջ աշխարհին :

Կովկին կատարեց իր հովուական պարտա -
կանութիւնը և չխնալեց իր ջանքեր մինչեւ
1885 , երբ օսմանեան կառավարութիւնը նը-
կասի առնելով նորին արբութեան յորդորները
իր սիրելի հայ ժողովուրդին գէպի յառաջդի-
մութիւն , հեռացնել Խրիմեանին իր Վասպու-
րական աշխարհէն գէպի Պոլիս .

Երբ Մաղկազարդն էր , իր սիրելի հօտ Կը
պատրաստուէր մեծ ուրախութեամբ տօնել ,
Մեսիայի գալուստը գէպի երօւսալիչմ . յան-
կարծ մինեց ամբողջ Վասպուրական եւ տօնք
պատեց իր հարազատ սիրելի հօտին որտերը ,
Երբ օրն շաբաթ էր Հազարսոխ յարութիւն Կը
տօնէր , վճիռ մը , կուսակալ քօսայ Հասան
փաշայի միջոցաւ , քսանուչորս ժամէն հեռա-
նալ իր Վասպուրական աշխարհէն , նոյնիսկ
չունեցաւ միջոց , լիովին հրաժեշտ տալ իր սի-
րելի հօտին , երբ Մաղկազարդի կիրակին էր .
Նորաշէն եկեղեցին այցելեց , մինչ առաքելո-
ցին իր վերջին օրհնութիւն և հրաժեշտ տալով
ուղեւորեցաւ գէպի Արարք եկեղեցին , հու ալ
իր վերջին օրհնութիւնն ու հրաժեշտ տալով
տուն դարձաւ , երբ երեկոյին , ժամերգու-
թեան ժամանակն է , ըստ Հայաստանի տովո-

րութեան կոչնակներ հնչացին , բարեպաշտ
ժողովուրդ նորին սրբութեան գալուստը կը
սպասէր :

Խրիմեան տօնէն ելնելով ուղեւորուեցաւ
գէպի իր մկրտութեան աւագանին յանկոյս
Զորովանքի եկեղեցին , խուռն բազմութիւն
ետևէն վազելով , երբ ըստ հընաց ոսվորու-
թեան , բարեպաշտ ժողովուրդ այդ եկեղեցին
կը տօնէր , դոնքացի արարողութիւն , նորին
սրբութիւն , ցուլ ձեռքին տուած , հարելով
զդուռն այն փոքրիկ տաճարին «բաց մեզ տէր
զգուռն ողորմութեան» . . . արարտարողութիւնը
աւարտելէն , նոյն բեմին , քարոզն գէպի իր
սիրելի հօտն , «Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ զի
հաճեցաւ հայրն ձեզ տալ ձեզ զարքայութիւն
երկնից» . . .

Եւ քաջալերելով իր սիրելի հօտին , թէ
ձեր հայրիկը ուր որ ալ երթայ չպիտի մոռա-
նայ իր հայ ժողովուրդը և հայրենիք Հայաս-
տան , պիտի գալ այն օր , որ բացուի Հայաս-
տանի այն գամոււած դուսներ , հայ ժողո-
վուրդ իր հայկազեանց Մաղկազարդ տօնէ , և
օրհնելով իր սիրելի հօտ և տալով վերջին հը-
րաժեշտ հեռացաւ :

Երբ Աւագ երկուչարթի էր , այցելեց Ս.
Յակոբ եկեղեցին , ինչպէս որ բեմին խօսեց ,
ըստ իր պարագաներուն և յիշելով Ներսէս
Շնորհալիին , երբ կը գրէ . «Այլ մեղայ ամե-

նասուրբ» . . ըստ բարեպաշտ ժաղովուրդի մի խրատ . . թէ ինչպէս կը մոռնայ ութերորդ , որ հօֆն մահացու մեղքերուն մայրն է , տգիտութիւն , և օրհնելով իր սիրելի հօտ , տալով վերջին հրաժեշտ , դուրս ելաւ , երբ եկեղեցու դուռին կանգնած աղքատ (դալալ) Կարապետ , կ'աղաջնմ , Հայրիկ , այսօր ինչպէս որ Քրիստոս Զաքէին հիւր եղաւ , զուն ալ ինծի հիւր լինիս , ըստ նորին աղքատասիրութեան չմերժեց , և երկինքի երես թուղղ պատաճ , անձրեւմանը կաթինսիրով իը աեղար , ուղեւորուեցաւ դեպի աղքատի խրնիթ , ուր խուռն բազմութիւն մը ետեւն կը վազէր , աղքատի դուռն հասաւ և նկրս մտնելով նրա սեղանէն գոհանալով , դուրս ելաւ , նորին վերջին հրաժեշտ , ըսելով թէ մեր Կարապետ եղաօր օրհնութիւն ալ պէտք է հայրիկին , և ինչպէս պերան արգարոց կանգնիցէ զքաղաք» . . Եւ ուղեւորուելով որրանոց , տալով վերջին հրաժեշտ օրբերուն և հայրենական օճախ երթալով վերջին հրաժեշտ տալու . .

Ինչպէս որ կը գրէ Վասկուրականի պաշտելի անգրանիկ հերոս , երբ 1896 իւ քաջարար կառաւց , Վասպուրականի ինքնապաշտպանութեան , և իր կեանք զոհեց , նահատակուեցաւ Բարթողմէսու վաերին առաջ 800 ընկերներով , Մկրտիչ Թերէմիզեան , Ա-

Հեախուեան :

Մնաս բարեաւ Վասպուրական ,
Վան նայրենիք իմ այժմեան տիտոր

Ուր ես ծնայ հայ հօր զաւակ ,
ուր մայրս կապեց իմ խանձարուր :

Մնաս բարեաւ Յայնկոյսներու ,
սուրբ առազան , եկեղեցի ,

Ուր որ խազով , սուրբ միւռոնով
մկրտուեցայ ես հայ որդի :

Մնաս բարեաւ Վարսկայ սար ,
եւ սիրելի իմ Հայուսուն ,

Ուր ձեր ազատ օդով շունչով ,
ես զարգացայ ի յերկն ի բան :

Մնաս բարեաւ Վարսկայ սար ,
համբոյր օդին քո կենաքեր ,

Որ քուոցիր քու այն արձիւ ,
փոքրիկ հալրիկ եր մարդաւեր :

Մնաս բարեաւ ողջ միաբան ,
ես երկրագործ մշակ գուրան

Դուր զեն պանիր Վասպուրական ,
իմ ցանկալի Վարսկայ դաշտ :

Մեսա բարեաւ Մայր Հայաստան,
անցեալ փառաց նշխարներով
Երբեք երբեք բեզ զեմ մոռնար
դուն նամբերէ ազատ յոյսով։

Մեար բարեաւ նայրենակից,
իմ սիրելի նայ ժողովուրդ
Քեզ չի մոռնար պանդուխտ նայրիկ,
դուն ես անոր կեանք ես խորձուրդ։

Մեսա բարեաւ, շեն ու նաստատ
պահն նախնեաց շիրմներ դուն

Մինչ բաց անէ շղբադ Աստուած,
կաց Հայաստան քո յուրօն մէջ։

Մեսա բարեաւ նայ գիւղական
նայոց դաշտի մըշակ զանակ։
Դուն պինդ պամիր նողն ու գուրան,
կ'անցնի վտանգդ, դուն նամարձակ

Մեսա բարեաւ սիրուն սախակ,
Հայաստանի վարդն անուշ
Կ'անցնի ձմեռն, կուգայ զարուն,
կը բացուի վարդն քո սիրուն։

Եւ ուղեւորուելով դէպի ազգային առաջ։

Նորդարան և սուրբ Նշան հկեղեցին, վերջին
ճրաժեշտ տալով և օրհնելով իր հակառա-
կորդներուն և տգէտներուն, և բարեմաղթե-
լով, ինչպէս որ իր պաշտելի վարդապետ ի-
խաչին, գոչէր. «Տէր թող դոցա, զի ոչ գի-
տեն զինչ գործեն»։

Ինչպէս որ կը գրէ Հայրապետ Շանիկ-
եան։

Վասպուրական ե՞ր կը նանջես,
քու բարերարդ աննման,
Ի՞նչ նատուցումացդ, զոր առնես,
արդար կշուն ամեն բան։

Արիստիտէս արդար անուն,
մի նախանձիր կուրաբար.
Դրազմ աղուխուն մի՛ ցնդունիր,
քու նակատիդ ի կամար։

Սյու լուսանքներ զոր կը ժայրես,
անոնց փոխան ներող սիրտ,
Քեզ կը մաղքէ բարօրուրիւն,
անձնանունէր քո նայրիկ։

Բայց եւ զիացի՛ր, որջափ լինին
սեւակոփնչ ագռաներ

Ինչ կարելի արծիւն իր բարձր
գիրքն յերկիր վար բերել :

Նորին սրբութիւնը կ'ուղեւարորի զէպի
Աւանց գիւղ, բայց իր սիրելի հօտ, նորին քը-
զանցք չի ձգեր, արք և կանայք : ծերք եւ
մանկունք, երիտասարդք և հուսանք, գովա-
բանելով իր հայրիկը .

Թող բարձրացունեն նոխնչ, աղաղակ,
բուրակ, կաջաղակ,

Մինակ փայելուց, մինակ սրտառուց
երգիշն և սոխուկ :

Թող վայեն բուեր, ազուաներ անքիւ,
նազար նաև ու նիւ,

Ամենից մեծը, ամենից բարձրը,
և ազատն արծիւ :

Թող տամ ում կ'ուզեն մանեակ, մատանիք,
նշանեն դափնիք,

Մինակ արծունիք, մինակ սիրելիք,
կը մընայ նայրիկ :

Հայրիկ, ո՞ն նայրիկ, թա բաղցըք անուան,
լինիմ ևս դուրպան,

Սիրել եմ այն նողը սր ծնաւ քեզ պէս
հրեշտակ պահապան :

Ով տէր սյահասնիր դուն մեր հալրիկին
քը նաւատարմին,

Անպակաս արա մեր գուշաներից
Երա նավամին :

Մինչ Աւանց հասնելով ազրիւրին մօտ:
տալով իր վերջին օրհնութիւն և հրաժեշտ եւ
յիշելով Դաւիթ մարգարէի ախն իսուք . «Տէր
ուղղեա զգնացր մեր ի ճանապարհի խաղո-
ղութեան» :

Եւ Աւանց երթալով նոյն բարենպաշտ ժա-
զովուրդի և սուրբ Յովհաննէս եկեղեցին այ-
ցելոց և իր վերջին օրհնութիւն և հրաժեշտ
տալով, կը թողու իր Վան Վասպուրական
աշխարհ և հեռանոյ իր աքսորավայր Կ. Պո-
լիս :

Պոլիս համիտական բանութեան լուծին
տակ, մինչև 1890 :

1890-ին օսմանեան բարբարոս խալի վան
Համիտ, Պոլակն կ'աքսորէ զայն նրաւսազէմ:
իսկ նորին սրբութիւնը չի վարանիր եւ չի
փոխեր իր մաքերը, ըստ իր նապատ-
կի :

1892-ին կը հրաւիրուի ի տան Ալբարատ-

եան , Սուրբ էջմիածին , ի գահին հայրապետական Կաթողիկոս ամենայն հայոց :

Խըմեան , ըստ իր ուխտին տէր լինել ի գահին Գրիգորին և տանելով այն հովուական պարտականութեան լուծը , նման իր պաշտելի վարդապետին , ինչպէս որ քարոզէր «Ես եմ հովիւն քաջ» . . .

Եւ ինչպէս որ գրէ Հայրապետ ձանիկ-եան .

Հայրիկ հայրիկ քեզ աւետիք ,
Այրարատեան վեհ աշխարհ .
Փուշի փոխան քեզ վարդ բերան ,
նրնուիր , ցնծա , բիւր հազար :

Մայիս իրեն սոխակներով ,
Եկաւ դարձաւ լայտգին ,
Երբ գայ հիմա ել չի դառնար ,
ախտի երգէ սխրագին :

Հայրիկ հայրիկ քու վարդերուղ ,
խայրիչ փուշերն սայրասուր ,
Վարդ են դարձեր բացուին բուրեն ,
աննման քերերն քաղցրաբոյր :

Եւ այն մացաւ սուր սլաքներ ,
համբերութեանդ գանին տուկ :

Դանար ակունք դարձած ամեն ,
յօրինեար են զարդ ու պանկ :

Հայրիկ հայրիկ բաց քու վերքերգ .
մենք պատրաստ ենք դարմանել .
Սիրոյ աղմիւ պալասանա ,
զայն պատուաստել ու օծել :

Հայրիկ հայրիկ քող վարատեն ,
քու տաղտակացած սեւ ամպեր
Հերիք գլխիդ հեղեղը դառնան ,
զան արտասուել սուրբ այտերդ
Մենք պատրաստ ենք , մենք ուխտել ենք .
պսակ հիւսել քեզ նամար

Զեռքեր ամեն , սիրտեր ամեն .
պիտ միանան քեզ նամար .
Հայրիկ , հայրիկ , հայուն փիւնիկ ,
անմանացուր դու մեր կեանք ,

Մոտիր , դպիր , կեանք տուր հայուն
Եւ ասա մերն է քո փառք .
Նաեւ երկինք անս կախէ ,
քեզ բազ փառաց աստեղաց :

Հայ հայրապետք այն քաղին շուրջ,
շարեն ակունք շափիւղալ:

Բազմիթ արռա լուսաւորչին
Հայոց մեծաց գերակայ,
Սահակ Պարքեն խանջած լուսած,
իր գաւազան քեզ կուտայ:

Հովովիր հօսող գաւազանաւ,
սփռէ, ցանէ, նոր կեանք ու լոյս,
Ամեն հասակ կ'օրննէ զրեզ,
դողդոց ձերուկ մատադ կոյս:

Եւ ինչպէս որ 1894-ին, գրէ հայրապետական դահին, Պտղիկ և Թոռնիկ:

Պտղիկը պարտական,
Թոռնիկը երախտագէտ»:

Պաղիկ պարկ ուսին մուրաց,
Թոռնիկ քսակ ձեռք ողօրմած,
Պաղիկ գրեց և սովորեցուց,
Թոռնիկ կարդաց և սովորեցաւ,
Պաղիկ յանձն առաւ
բանտ ու շնթայ, հալածանք,
Թոռնիկ անարդ կարդաց,
բռնութեան լուծին չլինել ենթակայ:

Պաղիկ գրեց իր կտակ,
Թոռնիկ իրագործեց նոյն նպատակ:

Նորին սրբութիւնը լիովին կատարելով իր
հովուական պարտականութիւն, և պտշտապա-
նելով հայ ժողովրդի իրաւունքները ցարի բո-
նութեան ծիրաններէն ազատելով և պահելով
իր ազգին գոյութիւն:

Եւ ինչպէս որ իր ծերութեան գուշակելով
աշխարհի համայն պետութեանց փոլիթիք,
և կը գրէ 1900-ին Թագաւորաց ժողով, ըստ
իր նպատակին, թերի կը մնայ իր կարօտ,
տեսնել փոռոքն ի Տան Այրարատեան:

1895-ին տայ իր ձայնը Այրարատեան աշ-
խարհէն մինչ Ամերիկան իր սիրելի թշուառ և
պանդուխտ հայ հօտին.

ԽՐԻՍԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿԵՆԴԱՆԻ ԶԱՅՆԸ
ԱՒՂՋՈՒԱԾ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԺՈՂՈՎԱԽՐԴԻՆ

(Առնեած գրամաֆոնի վրայ)

Ողջոյն ձեզ պանդուխտ որդիք հայոց, որ
բախտն զձեզ հայրենի աշխարհից վարել տա-
բել է մինչև Ամերիկա:

Ողջոյն ձեզ Արարատեան աշխարհէն:
Մասեաց նոյեան տապանէն, էջմիածնայ Սբ.
առհարէն:

Ազգոյն ձեզ Հայոց Հայրիկէն, ո՞ւ առյօ^թ
ինձ որ աւետիս առյօթ ձեզ իբրև Նոյեան ա-
ղաւնին, թէ շամաքեցաւ ջրհեղեղ, դարձէ՛ք
ձեր հայրենի աշխարհ։ Միրա առէ՛ք, քաջա-
լերաւեցէք անբախտ և բախտաւոր պանդուխտ
որդիք Հայոց։ Ասոււծոյ այցելութիւն մօտ է
մեր չարչարեալ աշխարհին։

Ողջո՛յն առւէք նաև մեծ հնարիչ Էտիսը-
նին, որ իմ կենդանի ձայնը առաւ բերաւ ձեզ,
կեցցէ յաւերժ ինք և իւր յիշատակը։

Կը շնորհաւորեմ ձեզ մուտ ի նոր Յարին
կեանք և յաջողութիւն մաղթելով ձեզ։

Եւ լիովին կատարելով իր հովուական
պարտականութիւնը, մինչև 1907-ին, և կըն-
քելով իր կեանք, և կը թողու իր որդւոց
Հայաստան կտակ, և իր յիսնամեայ աշխա-
տութեան արդիւնք կը վայելէ այօր։ ահա
հայ թուանիկ, այսմ անձնանուէր և ազգասէր
պապիկ, իր փափաքը լիովին կը գտնէ յաւի-
տենական կեանքին մէջ, և կը տօնէ, ու կը
տօնեն իր գաղտափարակից անձնանուէր և ազ-
գասէր խրիմետններ։

Դուն պաշտելի ո՞վ Խրիմեան,
Հայոց ազգիս գուն Մեծ Հայրիկ,
Այօր տօնէք երկինքէն,
Հայաստանի ժառագն ու պատիւ։

Եւ կը տօնէք հետ Սահակին,
Մեսրոբ Գրիգոր, Ներսէսներով,
Նորահաստատ Իշխանութիւն,
Այրարատեան Տան ի գաւին։

Բազմած բաթու Մարիս գլխին,
Եւ կը դիտէք Այրարատին։
Հիւսէք պատկ գուք երկնային,
Այրարատեան դիւցազներին։

Կաղմած թափօր գուք Երկնային,
Եւ կը տօնէք վեհ քաջերին,
Երկուից երկիր դընէք պատկ,
Գլուխ քաջաց Այրարատին։

Ներկայ գարուս Լուսաւորիչ,
Հայոց Հայրիկ գուն պաշտելի,
Աջ ձախ կանգնած Սահակ-Մեսրոբ,
Այն դիւցազներ ըստ մեր նախկին։

Թափօր դառնաք ի Մարիսին,
Երկնից երկիր սփոհէք ծաղիկ,
Վեհ Հայկազեանց սերտանդներին,
Առ ի սիրոյ ձեր փափաքին։

ինչպէս որ կը գոէ իր Դրախտի Ընտառիք ըստ իր ամուսնութեան վորձառու կեան քէն , սովորութեան լով մայրերուն զատիարակեալ եւ կրթեալ լինել :

Զի իրենց կաթին հետ խառնելով իրենց գիտութիւնը և այնպէս մոռւցանել իրենց զաւակներ , զի ապագային իրենց զաւակները կրթեալ և դաստիարակեալ լինին :

Ապա փափաք մ'ալ ունէր , ըստ իր հայրենասիրութեան . երբ կը փափաքէր ըստլով . ալևէք իմ ոսկորներն ալ տարէք , Եղիսէի նըման , իմ սիրելի Վարտագայ լերան ստորոտ եւ Վարագայ վանքի կտուրին տակ թաղեցէք» :



Ես կը հանդէմ աստ տխուր շիրմին
Պահէ ոսկորներս Արծիւ Հայկացեանց
Թող վկայ լինին Մասիս և Արաքս :
Մինչեւ որ որդիքու տանին ի Վարագս :

Զէ՛, չէ՛, չի մոռնայ քո սիրելի Վահսպուշ
ըականիդ լաճը եւ մեղուի նման պիտի բզբզայ
սիրելի հայ հօտի ականջին, և ոստայնանկի
նման հիւսելով պատկի.

Ինչ ոստայնանկ քո սիրելի
վասպուրական աշխարհից
Առնելով հիւթ մեզ պաշտելի
սրբավայել ձեր վարքից,
Հիւսեմ պսակը յԵղիպտոս
խոր խրճիթի մը անկիւնից,
Պարզեմ դնել մինչ Այրարատ
ըստ ձեզ տիսուր շիրիմիդ.
Ես կը գրեմ ձեզ այս պսակ
իմ անկարող ճանկերով
Եւ կը հիւսեմ ձեզ յիշատակ.
պինդ պողպատեայ հերիւնով,
Միշտ յիշելի սուրբ յիշատակի
քո հարազատ հայ հօտիդ:
Գուն Խրիմնան սուրբ Հայրապետ
հայոց հայրիկ պաշտելի:
Թող արք, կանայք, ծերք և մանկունք
երիտասարդք և կուսանք,
Փունջեր կապեն, մեխակ, շուշան,
այն սիրելիդ գինարբուք
Որք զարդարեն Վերին Վարագ
ափն Յիսուսեան ազբիւրին
Հիւսեն պսակի էջմիածին,
շաբուին ի սուրբ շիրիմիք:

Ծար ի շարան իգան տօնեն
սրբավայել յԵշատակիդ,
Միշտ յիշելի լուսաւորիչ:
ի կարգ Սահակ, Մեսրոպեանց
Ներկտյ գարուս, լուսաւորիչ,
ի տանէ մեր հայկազեանց,
Մինչ վարագիդ հանգչիլ ոսկերքդ:
արծ իւ ո հաւնդ հայրենեաց:
Ահա մեղուդ, առնելով հիւթ,
քո Վարագայ լեռնեից:
Բզբզալով դէպի Մասիս,
իջնէ ի խոր շիրիմիդ.
Գայ պատրաստէ մեղը անուշիկ
վասպուրական աշխարհից
Միշտ յիշելի, ի քո հօտին
ըստ քոյ փափաք Վարագիդ:

Մինչ հրաւէր կարգայ հօտիդ
Վասպուրական քո աշխարհ
Թող արտօնէ ձեղ Այրարատ,
Հանգչիլ ըստ ձեր փափաքին,
Նպատակիդ առնէ հօտիգ
ձեր օրբութեան ոսկորներ
Եղիսէի նման տանիւ
ձեղ հաճելի Վարագին:



Ահա փառք դիւցազներին, որով թշուտա կեանքին
փառք բերին



Թունիկն զերբ ի ձեռքին պատճեն հ'երգ
ՊԵՏԱԿԱՆ ՔԵԶ ԲԱՅԱՆԻԿ
ՀՅ. Ենթական այսուհան
* ZSRR-Arm. SSR *
ՀԽ. Ա. Մանուկյան
ՀՀ ՍՈՍՈՒԿՈՎԻ ԱԾՎԱՆ

Մենք միշտ յիշենք մեր նախնիք ,
Որ մեզ տուին այս բարիք . . .

Ոհ հեռու մնացի այն աշխարհն ,
Երբ պապերէն մեզ Հայաստան
Աւգութ Թրամվան խլեց կեանքս ,
Թերի մնաց փառքից փափաքս
Կեցցէ Հայ թռանիկ
Կեցցէ Հայաստան ,

Պաշտելի բարերարի յիշատակու-
թեան գրուածիս հասոյթը ի նպաստ
որբերուն է , զոր սրտահատոր զաւա-
կիս՝ ԱՐԱՄ Մ . ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆԻ ա-
պագայ էի պատրաստած . բայց Արամս
կը զրկուի այս փառքէն 1923ի Մարտ
25-ին Թրամվէին զոհ երթալով , ի Գա-
հիրէ .

(ՎԵՐՋ)

«Ազգային գրադարան»



NL0174253

